

## ՏԵՂԵԿԱՆՔ

### ՀՀ կառավարության նախաձեռնությամբ ներկայացված և 2011 թվականի փետրվար-հունիս ամիսներին ընդունված օրենքների վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի չորրորդ գումարման իններորդ և արտահերթ նստաշրջանների ընթացքում ընդունված կառավարության 61 օրենսդրական նախաձեռնությունները հիմնականում միտված էին Հայաստանի Հանրապետությունում գործարար միջավայրի և պետության կողմից մատուցվող ծառայությունների բարելավմանը, կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, սոցիալական քաղաքականության իրականացմանը:

#### 1. Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված օրենքներ

1.1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ Հայաստանի Հանրապետությունում ներդրումային և գործարար բարենպաստ միջավայր կձևավորվի, որտեղ կամրապնդվեն ընկերության կառավարման գործում որոշիչ ձայնի իրավունք չունեցող բաժնետերերի շահերը տնօրենների կողմից ընկերության ակտիվներն իրենց անձնական շահերի համար օգտագործման չարաշահումների դեպքում: Օրենքի ընդունման արդյունքում ընկերություններն ավելի գրավիչ կդառնան փոքր, բայց բազմաթիվ ներդրողների համար, ավելի կաշխուժանա արժեթղթերի շուկան:

1.2. «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով կազմակերպությունների գույքահարկի հաշվարկների ներկայացման և վճարումների կատարման պարբերականությունները եռամսյակայինից դարձվեցին կիսամյակային: «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով կազմակերպությունների կողմից հողի հարկի վճարումների կատարման պարբերականությունը եռամսյակայինից դարձվեց կիսամյակային:

1.3. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և դրան կից ներկայացված

ևս 20 օրենքների ընդունումը նախատեսում է կնիքի օգտագործման պարտադիր պահանջի վերացում: Փաստաթղթերի պարտադիր կնքված լինելու պահանջի վերացումը հիմնավորված է և նպատակահարմար, քանի որ գործարար աշխարհում արդեն կիրառվում են կնիքին փոխարինող անհատականացման այլ մեխանիզմներ: Ստորագրության նմուշների էլեկտրոնային բազայի ստեղծումը հնարավորություն է տալիս թե՛ ժամկետների և թե՛ փաստաթղթաշրջանառության առումով բավականին հեշտացնել մասնավոր հատվածի հարաբերությունները պետական մարմինների հետ: Էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառումը ապահովում է փաստաթղթերի բավարար պաշտպանվածություն և ստորագրողի նույնականացում:

1.4. «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքներով հեռահաղորդակցման ոլորտում գործունեություն իրականացնող օպերատորներն իրավունք ստացան իրենց հաճախորդների պարտքերի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել վարկային բյուրոյին: Այս տեղեկատվության գոյությունը կընդլայնի վարկային բյուրոյ կողմից տրված գնահատականների և ռեյտինգների հիման վրա վարկեր տրամադրելու հնարավորությունը՝ առանց գրավի ապահովվածության: Օրենքը միտված է առանց գրավի առարկայի վարկերի տրամադրման հեշտացմանը:

Միևնույն ժամանակ, օրենքը հնարավորություն կտա վարկային պատմություն ձևավորել այն անձանց համար, որոնք վարկեր չեն վերցրել բանկերից կամ վարկային կազմակերպություններից: Հետագայում այդ կազմակերպությունների հետ հարաբերվելու դեպքում հիմք կընդունվի անձի այն վարկային պատմությունը, որը ձևավորվել է հեռահաղորդակցման ոլորտում գործունեություն իրականացնող օպերատորների կողմից տրամադրված տեղեկությունների հիման վրա:

1.5. «Ազատ տնտեսական գոտիների մասին» և դրան կից ընդունված օրենքներով կարգավորվում են ազատ տնտեսական գոտիների ստեղծման, կազմակերպման և լուծարման ընթացքում ծագող իրավահարաբերությունները: Օրենքները կնպաստեն «Զվարթնոց» օդանավակայանի հարակից տարածքում, Գյումրի քաղաքում և «Մարս» ՓԲ

ընկերության տարածքում ազատ տնտեսական գոտիների ստեղծման համար բարենպաստ օրենսդրական հիմքի ապահովմանը:

1.6. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և դրան կից ներկայացված մի շարք այլ օրենքներով խստացվում են ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից կիրառվող պատասխանատվության միջոցները, ընդլայնվում են հանձնաժողովի լիազորությունները, այդ թվում՝ սուուզումների իրականացման գործընթացում, մեծացվում են ապացույցների ձեռքբերման հնարավորությունները: Հստակեցվում են օրենքի տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տվող դրույթները, ինչպես նաև օրենքը լրացվում է միջազգային մրցակցային իրավունքում ընդունված և լայն կիրառություն ունեցող մի շարք դրույթներով:

1.7. «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքները կնպաստեն աուդիտի ստանդարտների կիրառման համար առավել նպաստավոր պայմանների ստեղծմանը և աուդիտորական ծառայությունների որակի բարձրացմանը: Օրենքներով սահմանվում է «<<Փոխկապակցված անձինք>> հասկացությունը, որը հնարավորություն կտա իրական դարձնել աուդիտ իրականացնողի անկախության պահանջի նկատմամբ հսկողությունը: Աուդիտորական եզրակացությունը ոչ հավաստի ճանաչելու լիազորությունը վերապահվում է լիազորված մարմնին: Օրենքը լուծում է ոչ հավաստի աուդիտորական եզրակացություն տալու հիմքով վկայականը կամ լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու դեպքերում պատասխանատվությունը խստացնելու, աուդիտորական գործունեության լիցենզավորման բնագավառում խիստ կանոններ կիրառելու և աուդիտորների պատասխանատվության զգացումը բարձրացնելու խնդիրները: Օրենքով հստակ սահմանվում է աուդիտորական կազմակերպության ղեկավար լինելու իրավունք չունեցող անձանց շրջանակը, ամբողջացվում է լիցենզիա ստանալու համար ներկայացվող փաստաթղթերի ցանկը և տեղեկատվությունը, ինչպես նաև հստակեցվում է լիցենզիա ստանալու հայտի մերժման դեպքերը, բարձրացվել է օրենքով նախատեսված տուգանքների

նվազագույն չափը, տարանջատվել է գրանցամատյանը չլրացնելու և ոչ ճիշտ լրացնելու դեպքերի համար կիրառվող տուգանքի չափերը, սահմանվել է պատժամիջոց՝ ինտերնետային կայք ունենալու պահանջը չկատարելու համար:

1.8. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքները բարելավում են գործարար և ներդրումային մթնոլորտը՝ առաջարկելով լուրջ համակարգային փոփոխություններ ստուգումների գործընթացում:

Նպատակ հետապնդելով հստակեցնել ստուգումների իրականացման մեթոդաբանությունը՝ առաջարկվում է ռիսկերի վրա հիմնված ստուգումների համակարգ՝ առանձնացնելով բարձր, միջին և ցածր ռիսկայնություն ունեցող ձեռնարկություններ:

1.9. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքով արագացված դատաքննության միջոցով հնարավորինս պարզեցվել են առևտրային կազմակերպությունների միջև քաղաքացիաիրավական պայմանագրերից բխող վեճերի լուծման ընթացակարգերը: Արդյունքում՝ առավել սեղմ ժամկետներում կվերականգնվեն համապատասխան կազմակերպությունների իրավունքները, ինչն էլ կնպաստի վերջիններիս բնականոն գործունեության ապահովմանը:

1.10. «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքով 58,35 մլն ՀՀ դրամ և ավելի ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն ունեցող կազմակերպությունների և անհատ ձեռներեցների համար սահմանվում է հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունների էլկտրոնային եղանակով ներկայացման պարտադիր պահանջ:

1.11. «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և

գանձվում» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքներով հնարավորություն է ընձեռվել գյուղատնտեսական տրակտորների, որոշ մեքենաների և դրանց մասերի, պարարտանյութերի, սերմերի, թունաքիմիկատների իրացումն ավելացված արժեքի հարկից ազատելով նպաստել այդ ռեսուրսների ձեռքբերման մատչելիությանը, դրանց ներմուծման և օգտագործման ծավալների ընդլայնմանը:

## **2. Հակակոռուպցիոն բնույթի օրենքներ՝**

2.1. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը և դրան կից օրենքների ընդունումը պայմանավորված է պետական կառավարման համակարգի բարեփոխումներով: Օրենքների ընդունման արդյունքում հանրային ծառայության համակարգում կներդրվեն այնպիսի նոր ինստիտուտներ, ինչպիսիք են հանրային ծառայողի կողմից կատարվող տեղեկացումը (զեկուցումը), հանրային ծառայողի կողմից նվերներ ընդունելու արգելքը, հանրային ծառայողի շահերի բխումը, էթիկայի կանոնները, ռոտացիան:

2.2. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքներով կարգավորվել են հարկադիր (էլեկտրոնային) աճուրդի վերաբերյալ որոշման կայացման ժամկետները: Ակնկալվում է կանխարգելել գույքի հանրային վաճառքի վիճակագրության վարման ընթացքում ի հայտ եկող հնարավոր թերացումները, պարզեցնել հանրային վաճառքի իրականացման ընթացակարգերը, ինչն իր հերթին կնպաստի գործարար միջավայրի բարելավմանը և հնարավոր կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը:

2.3. «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով նոտարի քննությանը մասնակցելու 1 տարվա ստաժավորման պահանջը փոխարինվեց 6 ամսվա ստաժավորման պահանջով, իսկ 3 տարվա իրավաբանի մասնագիտական աշխատանքային ստաժի կամ գիտական աստիճանի առկայության դեպքում՝ առնվազն 3 ամսով: Նոտարի քննությանը

մասնակցելու համար սահմանված իրավաբանական բարձրագույն կրթության պահանջը փոխարինվեց իրավաբան մագիստրոսի կամ իրավաբան դիպլոմավորված մասնագետի որակավորման պահանջով: Օրենքի ուժի մեջ մտնելու ընթացիկ տարվա որակավորման քննությանը մասնակցելու և նոտարի պաշտոնում նշանակվելու հնարավորություն ընձեռվեց նաև իրավաբանի առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող Հայաստանի Հանրապետության գործունակ քաղաքացիներին՝ անկախ ստաժավորման հանգամանքից:

2.4. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով նախատեսվում է տնտեսական հանցագործությունների որոշ տեսակների համար քրեական պատասխանատվությունից ազատում՝ հանցագործությամբ պետությանը պատճառված վնասի և հաշվարկված տույժերի ու տուգանքների հատուցման դեպքում:

### **3. Պետության կողմից մատուցվող ծառայությունների բարելավմանն ուղղված օրենքներ**

3.1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքներով էապես պարզեցվեց անշարժ գույքի գործարքների կնքման ընթացակարգը, նվազեցվեց դրա ժամկետներն ու ծախսատարությունը: Արդյունքում, անշարժ գույքի գործարքներ կատարող անձինք գործարքը կնքելու նպատակով կայցելեն միայն գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմնի ցանկացած տարածքային ստորաբաժանում (անկախ գույքի գտնվելու վայրից), որտեղ հնարավորություն կունենան առանց վավերացման համար վճարումներ կատարելու ստորագրել գործարքի փաստաթուղթը և միաժամանակ նույն վայրում այն հանձնել գործարքից ծագող իրավունքների պետական գրանցման համար: Արդյունքում, անշարժ գույքի գործարքները հնարավոր կլինեն կնքել ընդամենը մեկ աստյան ներկայանալով: Ընդ որում՝ նույն աստյանում կիրականացվի նաև գործարքից ծագող իրավունքների պետական

գրանցումը և գույքի նկատմամբ իրավունքը ձեռք բերած անձին կտրամադրվի համապատասխան վկայական:

3.2. «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և դրան կից ևս չորս այլ ՀՀ օրենքները նպատակաուղղված են Հայաստանի Հանրապետության համայնքներում անվտանգ և բնականոն քաղաքաշինական զարգացումն ապահովող տարածական պլանավորման փաստաթղթերի լիարժեք բազայի ձևավորմանը՝ դրանց մշակման և հաստատման գործառույթների հստակեցման, ինչպես նաև խթանման համապատասխան լծակների ամրագրման միջոցով:

Օրենքները կնպաստեն քաղաքաշինական գործունեության օպտիմալացմանը, կապահովվի ծրագրային փաստաթղթերի մշակման մատչելիությունն ու արդյունավետությունը, կխթանվի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման գործընթացը, կամրապնդվի համայնքների ինստիտուցիոնալ կարողությունները, ինչպես նաև կկրճատվի կառուցապատման ընթացակարգերի թիվն ու ծախսվող ժամանակը:

3.3. «Քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ բարձրացավ քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտում վարչարարության արդյունավետությունը, կրճատվեց վարչարարության ժամկետները, սահմանվեց քաղաքացիների սպասարկման համար առավել բարենպաստ պայմաններ: Արդյունքում կնվազեն քաղաքացիական կացության ակտերի գրանցման հետ կապված կոռուպցիոն ռիսկերը:

3.4. «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով հստակեցվեցին և պարզվեցին պետական նպաստների՝ երեխայի ծննդյան միանվագ, ինչպես նաև մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի նշանակման և վճարման հետ կապված հարաբերությունները: Վերանայվեցին ներկայացվող փաստաթղթերի ցանկը, դրանց ձեռքբերման, տեղեկատվության հավաքագրման մեխանիզմները: Ստեղծվեց տվյալներն առցանց եղանակով ստանալու գործընթացի իրավական հիմք:

#### 4. Հարկային համաներում

4.1. «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքով կարգավորվեց կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի՝ տարիներ շարունակ կուտակած հարկային եւ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորությունների աստիճանական մարման գործընթացը՝ հարկային պարտավորությունների մարման ժամանակացույցի հաստատման միջոցով: Ժամանակացույցով հաստատված գումարների մարման ժամկետը կախված է հարկ վճարողի հարկային պարտավորության գումարից, որի փաստացի մարման դեպքում հարկ վճարողը կազատվի օրենքով սահմանված տույժերի, տուգանքների վճարման պարտավորությունից:

«2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» ՀՀ օրենքի հիմնական նպատակը օրենքով սահմանված կարգով գրանցված և հարկային մարմիններում հաշվառված, սակայն ըստ էության չաշխատող (այդ թվում տեսանելի ապագայում) տնտեսվարող սուբյեկտների լուծարումն է (գործունեության դադարեցումը): Արդյունքում կհստակեցվեն ՀՀ հարկային մարմիններում հաշվառված և տնտեսական գործունեություն իրականացնող հարկ վճարողների իրական թիվը, ինչպես նաև կնվազեն իրականացվող վարչարարական ծախսերը:

4.2. «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքները կանոնակարգում են հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների չկատարման դեպքում արգելանքի կիրառումը: Միաժամանակ լուծում են հարկային վարչարարության ընթացքում առաջացող խնդիրները:



Պարտավորության ոչ պակաս քան քսան տոկոսը մարելուց հետո հարկային մարմինն իրավունք է վերապահվում մնացած հարկային պարտավորությունը մարելու վերաբերյալ հարկ վճարողի հետ կնքել հարկային պարտքի աստիճանական մարման ժամանակացույց:

Կանոնակարգվում են ստուգումների ընթացքում հայտնաբերվող վարչական իրավախախտումների համար պատասխանատվության նախատեսման ժամկետները:

## **5. Սոցիալական բնույթի օրենքներ**

5.1. «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով լուծվեց ժամանակավոր անաշխատունակության նպաստի հաշվարկման, նշանակման և վճարման կապակցությամբ առկա խնդիրները:

Սահմանվեց, որ նպաստը վճարվում է նաև ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի տոնական ոչ աշխատանքային օրերի համար՝ պահպանելով դրա չվճարումը ընդհանուր հանգստյան (շաբաթ և կիրակի) օրերի համար:

Վերացվեց վարձու աշխատողներին վճարվող հղիության և ծննդաբերության նպաստը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական աշխատավարձի առավելագույն շեմը (առավելագույն շեմը պահպանվում է մյուս նպաստների համար)՝ ըստ այդմ վերանայելով նաև վարձու աշխատողի նպաստը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական աշխատավարձը հաշվարկելու կարգը (արդյունքում՝ վերջին 12 ամիսների ընթացքում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնված անձի կորցրած եկամուտը կփոխհատուցվի 100 տոկոսով):

Սահմանվեց, որ հարկային մարմինը անհատ ձեռնարկատիրոջ նպաստը հաշվարկելու համար հիմք հանդիսացող տեղեկանքը տրամադրում է միայն տեղեկանքի համար դիմելու օրվա դրությամբ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորությունները կատարելուց հետո:

Կարգավորվեց անհատ ձեռնարկատիրոջ կողմից ճշտված հաշվետվություն ներկայացնելու դեպքում (եթե ճշտվում է նպաստը հաշվարկելու համար հիմք հանդիսացող

եկամուտը) ավել վճարված նպաստի գումարը հետպահելու և պակաս վճարած նպաստի գումարը վճարելու հետ կապված հարաբերությունները:

5.2. «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքով նախատեսվում է օրենքի ուժով պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում տալ հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորող արական սեռի Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ մինչև նրանց 19 տարին լրանալը, եթե համապատասխան զինվորական կոմիսարիատ են ներկայացնում ուսումնական հաստատության պաշտոնատար անձի կողմից տրված տեղեկանք՝ տվյալ ուսումնական հաստատությունում ուսումնառության վերաբերյալ: